ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲԽ-ԱՄ 2018/80

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/80 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 10.08.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը զբաղվում է համակարգչային տեխնիկայի ներկրմամբ և վաճառքով: Ընկերությունը ցանկանում է մասնակցել ՀՀ բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված Համակարգիչների և Տպիչի համար Պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնման գործընթացին, սակայն Պատվիրատուի կողմից առաջադրված

պայմանները ՀՀ օրենսդրությանը չհամապատասխանելու արդյունքում, առանց այդ պայմանները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու Ընկերությունը զրկվում է մասնակցության հնարավորությունից:

Հավելվածի 1-ին չափաբաժնում համակարգիչների տեխնիկական բնութագիրը մասում նշված է՝ «Պրոցեսորը՝ առնվազն CPU-Intel Core i3-7100 կամ համարժեքը, առնվազն 3.9 GHz հաճախականությամբ՝ թույլատրելի շեղումը +/- 10%, կոշտ սկավառակը HDD - ոչ պակաս 1000GB, օպերատիվ հիշողությունը՝ RAM 4GB (1x4GB) DDR4 կամ համարժեքը, ոչ պակաս 4GB; Video Card - intel HD Graphics կամ համարժեքը, DVD-RW, առնվազն չորս USB 2.0, երկու USB 3.0 RJ-45, HDMI, VGA բնիկներ, 5.1 աուդիո համակարգի համար ելքեր, սնուցման բլոկը՝ 200Վտ՝ թույլատրելի շեղումը +/- 20%, ստեղնաշարը գործարանային անգլերեն և ռուսերեն տառատեսակներով՝ միևնույն արտադրողից, մկնիկը լազերային՝ միևնույն արտադրողից: Փոփոխական միաֆազ 220 Վ լարում: Հոսանքի լար, խրոցը երկբևեռ, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: Երաշխիքային ժամկետն առնվազն 730 օրացուցային օր: Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից(MAF):»

Հավելվածի 2-րդ չափաբաժնում Տպիչի տեխնիկական բնութագիրը մասում նշված է՝ «Տպիչ ցանցային՝ 10/100Base-T Ethernet, բազմաֆունկցիոնալ, քարթրիջը լազերային և լիցքավորվող: Տպիչը՝ միակողմանի տպագրման հնարավորությամբ, հիշողությունը ոչ պակաս 64MB, թղթի ձևաչափը՝ A4, տպելու որակը 1200x600dpi, արագությունը առնվազն 18 էջ/րոպեում, ամսական տպագրման հնարավորությունը մինչև 8000 էջ: Սկաները՝ սկանավորման արագությունը առնվազն 18 էջ/րոպեում, սկանավորման որակը 9600x9600 dpi, պատճենահանման որակը 600x600 dpi, USB 2.0 և լար: Առանց քարթրիջի լիցքավորման կոդի կամ կոդի բացումը վաճառողի հաշվին: Քարթրիջը ոչ պակաս 1600 էջի տպագրման հնարավորությամբ, թմբուկ-քարթրիջը՝ ոչ պակաս 23000 էջ: Փոփոխական միաֆազ 220 Վ լարում, հոսանքի լար, խրոցը երկբևեռ, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: Երաշխիքային ժամկետն առնվազն 365 օրացուցային օր: Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից(MAF):»

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է՝

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:»

Համեմատություն անցկացնելով հոդվածի բովանդակությամբ առաջադրված պայմանների և 1-ին և 2-րդ չափաբաժնիններում նշված համակարգիչների և տպիչի տեխնիկական բնութագիրը մասում նշված տվյալների հետ, ակնհայտ է դառնում, որ Պատվիրատուն չի պահպանել Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր կիրառման ենթակա պահանջները:

Դիտարկումը վերաբերվում է համակարգիչների և տպիչի տեխնիկական բնութագիրը մասում նշված «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից(MAF)» պայմանին:

Նշված պայմանի առաջադրումն առաջ է բերում Ընթացակարգի մասնակիցների համար անհավասար պայմաններ, ինչպես նաև հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի հանդեպ, քանի որ Հայաստանի Հանրապետություն արտադրողի կողմից պաշտոնապես ներկրման հավաստագիր (MAF) տրամադրվում է բացառապես իր պաշտոնական ներկայացուցչին, իսկ Ընթացակարգի մասնակիցը նման հավաստագիր կարող է ստանալ կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչից տվյալ արտադրողի ապրանքը ձեռք բերելու դեպքում, իսկ տվյալ պարագայում բացասական հետևանքը կայանում է նրանում, որ Ընթացակարգի մասնակիցը կոնկրետ արտադրողի պաշտոնական ներկայացուցչից տվյալ արտադրողի ապրանքը բավականին բարձր գնով է ձեռք բերելու, որպիսի պարագայում ինքնաբերաբար առաջ է գալու մրցույթի մասնակիցների համար անհավասար պայմաններ, ինչը բնականաբար ՀՀ օրենսդրության պահանջների կոպիտ խախտում է հանդիսանում:

Ընկերությունը հայտնել է, որ արտադրողների մեծ մասը մրցույթների մասնակցելու ներքին կարգ է մշակել, որի արդյունքում նրանք արտոնություն տալով իրենց պաշտոնական ներկայացուցչին անհավասար պայմաններ են առաջ բերում այլ մասնակիցների համար, որպիսի պարագայում վերջիններս ունենալով առավելություն այլ մասնակիցների նկատմամբ կարողանում են էական ազդեցություն ունենալ մրցույթի կազմակերպման առումով՝ կոնկրետ արտադրողի մասով մրցույթի հայտարարման, կոնկրետ արտադրանքի չափանիշների և համապատասխան ապրանքների մասով:

Արտոնությունը հիմնականում տրամադրվում է մեկ գործընկերոջը, որն էլ հնարավորություն է ստանում «գերշահույթ» ստանալու, քանի որ իրեն տրված արտոնության արդյունքում վերջիններս վստահաբար տեղեկացված են լինում մնացածին տրամադրվող ավելի բարձր գների մասին և իր ունեցած առավելության մասին:

Պատվիրատուների կողմից Հավաստագիր պահանջելու պայմանի առաջադրման հանգամանքը խոսում է բացառապես վերջիններիս կողմից ազատ մրցակցության սահմանափակման մասին, քանի որ դա կարող է գործիք/լծակ հանդիսանալ արտադրողի կողմից արտոնյալ պայմաններ ստացած գործընկերոջ ձեռքում, ովքեր անհավասար պայմաններում են հայտնվում մրցույթին մասնակցող այլ մասնակիցների հանդեպ:

Հետևաբար Ընկերությունը գտնում է, որ ակնհայտ է, որ Հավաստագիրը և նման այլ սահմանափակող հանգամանք հանդիսացող փաստաթղթերի պահանջն ուղղված է բացառապես ազատ մրցակցության գաղափարի դեմ, ինչը պետք է արմատախիլ արվի:

Ընկերությունը գտնում ք, որ վերոգրյալը հանդիսանում է նաև ՀՀ Սահմանադրությամբ և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների խախտում և սահմանափակում:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

ՀՀ Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝

1.Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը տարածվում է տնտեսվարող սուբյեկտների, պետական մարմինների, ինչպես նաև դրանց պաշտոնատար անձանց այն գործողությունների կամ վարքագծի վրա, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը, արգելմանը կամ անբարեխիղճ մրցակցության գործողությանը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, ինչպես նաև վնասել սպառողների շահերը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

«տնտեսական մրցակցություն կամ մրցակցություն»՝ ապրանքների իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները.

«մրցակցության սահմանափակման, կանխման կամ արգելման հատկանիշներ»՝ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների քանակի կրճատում, ապրանքի

գնի բարձրացում կամ իջեցում, որոնք կապված չեն ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների համապատասխան փոփոխությունների հետ, անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքային շուկայում ինքնուրույն գործողություններից հրաժարում, ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների սահմանում տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների արդյունքով, կամ այլ անձի կողմից տրված՝ նրանց համար պարտադիր կատարման ենթակա ցուցումներին համապատասխան, կամ անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարող սուբյեկտների գործողությունների համաձայնեցման արդյունքով, այլ հանգամանքներ, որոնք տնտեսվարող սուբյեկտի համար հնարավորություն են ստեղծում միակողմանիորեն ազդել ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա, ինչպես նաև պետական մարմինների և (կամ) դրանց պաշտոնատար անձանց կողմից ապրանքների կամ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ օրենքով չնախատեսված պահանջների սահմանումը:

Վերոգրյալն առավել քան բավարար է արձանագրելու, որ Տեխնիկական բնութագրի 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված համակարգիչների և տպիչի տեխնիկական բնութագիրը մասում նշված պայմանները ոչ միայն չեն համապատասխանում Օրենքի 13-րդ հոդվածի պարտադիր կիրառման ենթակա պահանջների, այլև ոտնահարում են ՀՀ Սահմանադրությամբ և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով Ընկերության համար սահմանված իրավունքները:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին հավելված 1-ին և 2-րդ չափաբաժիններում նշված համակարգիչների և տպիչի տեխնիկական բնութագրում նշված պայմանները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ օրենսդրության պարտադիր կիրառման ենթակա պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 10.08.2018թ. գրությամբ Ընկերությունը պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը և պահանջը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.08.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ բնապահպանության նախարարության անտառային կոմիտեն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 14.08.2018թ. թիվ 2-09/21 գրությամբ հայտնել է, որ ՀՀ բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի կողմից հայտարարված «ԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն թվականի օգոստոսի 3-ի թիվ 1 որոշմամբ հաստատել է «Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման» նպատակով գնանշման հարցման հրավերը:

Հրավերը սահմանված կարգով հրապարակվել է ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

Ընթացակարգի սահմանված չափաբաժինները թվով չորսն են, սակայն Ընկերությունը բողոքարկել է առաջին և երկրորդ չափաբաժինները, որոնցում նշված է Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր (MAF):

Ընթացակարգին մասնակցելու հայտ են ներկայացրել 11 մասնակից, որից 4 մասնակից հայտ են ներկայացրել առաջին չափաբաժնով, իսկ երկրորդ չափաբաժնով ընդհանրապես մասնակից չկա:

«ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ն գտնում է, որ առաջին և երկրորդ չափաբաժիններում առկա Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր (MAF) նշագրումը չի համապատասխանում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:

«ԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը կազմված է եղել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքին և իրավական այլ ակտերին համապատասխան:

Տեխնիկական բնութագիրը կազմված է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ նրանում չկան կոնկրետ ապրանքնային նշանին վերաբերվող հղումներ, դետալներին հղումներ տալով կիրառվել է «կամ համարժեքը» բառակապակցությունը: Ինչ վերաբերվում է

«Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր (MAF)»-ի պահանջին՝ բնապահպանության նախարարության անտառային կոմիտեն ցանկանում է ձեռքբերել գործարանային համակարգիչներ, որոնց վրա տեղադրված են գործարանային դետալներ, որոնք ավելի հուսալի են և զերծ կեղծիքներից, քան տարբեր երկրներում արտադրված էժան դետալներով մեր երկրում հավաքված սեղանի համակարգիչները և տպիչները:

«Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր (MAF)»-ը կիրառվել է նաև ֆինանսների նախարարության, բնապահպանության նախարարության համակարգչային տեխնիկայի հրավերներում, մասնավորապես՝ բնապահպանության նախարարության հրավերի ձևը սույն Ընթացակարգում կիրառվել է որպես օրինակելի ձև:

Բնապահպանության նախարարության անտառային կոմիտեն չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի ոչ մի կետ և «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր (MAF)»-ը նույնպես չի հանդիսանում օրենքի խախտում, քանի որ այն օրենքով սահմանված և Հայաստանի Հանրապետությունում ընդունված փաստաթուղթ է, հակառակ դեպքում օրենքով կամ իրավական այլ ակտերով վերացված կլիներ տվյալ փաստաթղթի կիրառումը Հայաստանի Հանրապետությունում:

Մրցույթի առաջին չափաբաժնի համար մասնակցել է չորս կազմակերպություն, որն արդեն հավաստում է, որ կա մրցակցություն և հետևաբար, հերքում է դիմումատուի այն տեսակետը թե «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր (MAF)»-ը սահմանափակում է ազատ մրցակցությունը և անհավասար պայմաններ է առաջացնում:

Պատվիրատուն գտնում է, որ Հայաստանի Հանրապետության և ոչ մի օրենքով չի սահմանափակվում պատվիրատուի կողմից որակյալ ապրանքի ձեռքբերման իրավունքը:

Մեկ կարևոր հանգամանք ևս՝ նախատեսված համակարգիչները և տպիչները իրենց տեխնիկական ցուցանիշներով՝ որակ-գին հարաբերության մեջ բարձր են: Տեխնիկական բնութագիրը կազմելիս սկզբունքային է եղել պետությունից Պատվիրատուին հատկացված գումարի սահմաններում ձեռք բերել առավել հզոր ցուցանիշներով և առավելագույն որակով ապրանք, ինչը նորագույն և արագ զարգացող աշխարհում գոնե երեք տարի կծառայի և գոնե բարոյապես չի հասցնի մաշվել:

Պատվիրատուն գտնում է, որ «ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի բերված հիմնավորումն անհիմն է և նույն կերպ այլ վաճառողներ կարող են բողոքարկել տեխնիկական չափանիշների դեմ: Իր տնտեսական շահերից ելնելով բողոք ներկայացրած անձը ցանկանում է մասնակցել ընթացակարգին և մատակարարել ոչ գործարանային արտադրանք, որը պատվիրատուի չի բավարարում ելնելով որոշ որակական հատկանիշներից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.08.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲԽ-ԱՄ-2018/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի կողմից իր կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	30211220	սեղանի համակարգիչներ	Պրոցեսորը՝ առնվազն CPU-Intel Core i3-7100 կամ համարժեքը, առնվազն 3.9 GHz հաճախականությամբ՝ թույլատրելի շեղումը +/- 10%, կոշտ սկավառակը HDD - ոչ պակաս 1000GB, օպերատիվ հիշողությունը՝ RAM 4GB (1x4GB) DDR4 կամ համարժեքը, ոչ պակաս 4GB; Video Card - intel HD Graphics կամ համարժեքը, DVD-RW, առնվազն չորս USB 2.0, երկու USB 3.0 RJ-45, HDMI, VGA բնիկներ, 5.1 աուդիո համակարգի համար ելքեր, սնուցման բլոկը՝ 200Վտ՝ թույլատրելի շեղումը +/- 20%, ստեղնաշարը գործարանային անգլերեն և ռուսերեն տառատեսակներով՝ միևնույն արտադրողից, մկնիկը լազերային՝ միևնույն արտադրողից: Փոփոխական միաֆազ 220 Վ լարում: Հոսանքի լար, խրոցը երկբևեռ, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: Երաշխիքային ժամկետն առնվազն 730 օրացուցային օր: Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից

			(MAF):
2	30232110	Լազերային տպիչ	Տպիչ ցանցային՝ 10/100Base-T Ethernet, բազմաֆունկցիոնալ, քարթրիջը լազերային և լիցքավորվող: Տպիչը՝ միակողմանի տպագրման հնարավորությամբ, հիշողությունը ոչ պակաս 64MB, թղթի ձևաչափը՝ A4, տպելու որակը 1200x600dpi, արագությունը առնվազն 18 էջ/րոպեում, ամսական տպագրման հնարավորությունը մինչև 8000 էջ: Սկաները՝ սկանավորման արագությունը առնվազն 18 էջ/րոպեում, սկանավորման որակը 9600x9600 dpi, պատճենահանման որակը 600x600 dpi, USB 2.0 և լար: Առանց քարթրիջի լիցքավորման կոդի կամ կոդի բացումը վաճառողի հաշվին: Քարթրիջը ոչ պակաս 1600 էջի տպագրման հնարավորությամբ, թմբուկ-քարթրիջը՝ ոչ պակաս 23000 էջ: Փոփոխական միաֆազ 220 Վ լարում, հոսանքի լար, խրոցը երկբևեռ, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: Երաշխիքային ժամկետն առնվազն 365 օրացուցային օր: Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF):

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի 10.08.2018թ. բողոքը, «ԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 24.08.2018թ. թիվ ՄԲ-283 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ բնապահպանության նախարարության անտառային կոմիտեի կողմից իր կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	30211220	սեղանի համակարգիչներ	Պրոցեսորը՝ առնվազն CPU-Intel Core i3-7100 կամ համարժեքը, առնվազն 3.9 GHz հաճախականությամբ՝ թույլատրելի շեղումը +/- 10%, կոշտ սկավառակը HDD - ոչ պակաս 1000GB, օպերատիվ հիշողությունը՝ RAM 4GB (1x4GB) DDR4 կամ համարժեքը, ոչ պակաս 4GB; Video Card - intel HD Graphics կամ համարժեքը, DVD-RW, առնվազն չորս USB 2.0, երկու USB 3.0 RJ-45, HDMI, VGA բնիկներ, 5.1 աուդիո համակարգի համար ելքեր, սնուցման բլոկը՝ 200Վտ՝ թույլատրելի շեղումը +/- 20%, ստեղնաշարը գործարանային անգլերեն և ռուսերեն տառատեսակներով՝ միևնույն արտադրողից, մկնիկը լազերային՝ միևնույն արտադրողից: Փոփոխական միաֆազ 220 Վ լարում: Հոսանքի լար, խրոցը երկբևեռ, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: Երաշխիքային ժամկետն առնվազն 730 օրացուցային օր: ***Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF):***
2	30232110	Լազերային տպիչ	Տպիչ ցանցային՝ 10/100Base-T Ethernet, բազմաֆունկցիոնալ, քարթրիջը լազերային և լիցքավորվող: Տպիչը՝ միակողմանի տպագրման հնարավորությամբ, հիշողությունը ոչ պակաս 64MB, թղթի ձևաչափը՝ A4, տպելու որակը 1200x600dpi, արագությունը առնվազն 18 էջ/րոպեում, ամսական տպագրման հնարավորությունը մինչև 8000 էջ: Սկաները՝ սկանավորման արագությունը առնվազն 18 էջ/րոպեում, սկանավորման որակը 9600x9600 dpi, պատճենահանման որակը 600x600 dpi, USB 2.0 և լար:

			Առանց քարթրիջի լիցքավորման կոդի կամ կոդի բացումը վաճառողի հաշվին: Քարթրիջը ոչ պակաս 1600 էջի տպագրման հնարավորությամբ, թմբուկ-քարթրիջը՝ ոչ պակաս 23000 էջ: Փոփոխական միաֆազ 220 Վ լարում, հոսանքի լար, խրոցը երկբևեռ, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային: Երաշխիքային ժամկետն առնվազն 365 օրացուցային օր: ***<u>Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF):</u>***

Հրավերի տեխնիկական բնութագրի 1-ին և 2-րդ չափաբաժիններով «Սեղանի համակարգիչներ» և «Լազերային տպիչ» գնման առարկաների համար նախատեսվել է «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF)» փաստաթուղթ նրկայացնելու պահանջ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF)» փաստաթղթի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով 22.08.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/15099-18 գրությամբ դիմել է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ին, խնդրելով հայտնել թե արդյոք «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF)» փաստաթուղթն ունի որևէ իրավական կարգավորում և որքանով է այն երաշխավորում ապրանքի որակը:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 24.08.2018թ. թիվ ՄԲ-283 գրությամբ հայտնել է, որ ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման մասին օրենսդրությամբ արտադրանքի որակի համապատասխանության գնահատման համար սահմանված են հետևյալ երեք եղանակները՝

1. Համապատասխանության հայտարարագրում,
2. Համապատասխանության հավաստագրում, և
3. Պետական գրանցում:

«Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն նույն գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF)» փաստաթուղթը չի հանդիսանում ստանդարտացման փաստաթուղթ և այն նախատեսված չէ տեխնիկական կանոնակարգման մասին օրենսդրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.***

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Դրա հետ մեկտեղ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ***բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:*** Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ուսումնասիրելով «ԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, մասնավորապես տեխնիկական բնութագրով սահմանված՝ «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF)» փաստաթուղթը ներկայացնելու պահանջը, ինչպես նաև հաշվի առնելով «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 24.08.2018թ. թիվ ՄԲ-283 գրությամբ արտահայտված դիրքորոշումը՝ գտնում եմ, որ Ընթացակարգի հրավերով «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF)» փաստաթղթի պահանջ սահմանելը կարող է խոչընդոտ հանդիսանալ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սկզբունքներին համապատասխան գնման գործընթացի կազմակերպման համար, քանի որ նշված փաստաթղթի՝ օրենսդրական կարգավորման դաշտի բացակայության պայմաններում, վերջինս ներկայացնելու պարտադիր պահանջը կարող է հանգեցնել մրցակցության խրախուսման, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության, մասնակիցների շրջանակի ընդլայնման և մի շարք այլ սկզբունքների խախտմանը:

Դրա հետ մեկտեղ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն 24.08.2018թ. թիվ ՄԲ-283 գրությամբ հայտնել է, որ ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման մասին օրենսդրությամբ արտադրանքի որակի համապատասխանության գնահատման համար սահմանված են երեք եղանակներ՝ համապատասխանության հայտարարագրում, համապաատասխանության հավաստագրում և պետական գրանցում: Հետևաբար նման պայմաններում ուսումնասիրելով «Հայաստանի Հանրապետություն պաշտոնապես ներկրման հավաստագիր արտադրողի կողմից (MAF)» փաստաթղթի բնույթը, ինչպես նաև հաշվի առնելով ապրանքի որակի համապատասխանության գնահատման հիմնական եղանակները, գտնում եմ, որ քննարկվող փաստաթղթի ներկայացման պահանջը հանդիսանալով պատվիրատուի համար հավելյալ երաշխիք ապրանքի որակի ապահովման համար, այնուամենայնիվ այն կարող է հանգեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված յուրանաքանչյուր անձի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքի իրացման համար խոչընդոտների առաջացմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2018թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՆՈՈՒԹ.ԱՄ» ՍՊԸ-ի կողմից 10.08.2018թ. ներկայացված բողոքը բավարարել և պարտավորեցնել «ԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**